

ԲԱՆԱՀԱՎԱՔՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՊՀ ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Վարդանյան Նվարդ

*բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Երևանի պետական համալսարան,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
Հայաստանի Հանրապետություն,
vardanyan.nvard@ysu.am
<https://orcid.org/0000-0002-3888-3668>*

Ամփոփում

Բանահյուսությունն առարկան, ի տարբերություն գրականության, չի սահմանափակվում միայն գրքային նյութի յուրացման անհրաժեշտությամբ, այլև կենդանի կենցաղավարող բանահյուսության ճանաչողությամբ և այս նյութի գրառման սկզբունքների իմացությամբ: Առարկան ուսումնասիրող ուսանողի համար կարևոր է լինել դաշտում, անմիջական շփում ունենալ բանասացների հետ, ճանաչել ու կարողանալ գրառել բանահյուսական նյութեր: Այս ճանապարհով ուսանողն առավել պարզ է ընկալում բանահյուսական պատրաստի և արդեն տպագրված բնագրերի անցած ճանապարհը դրանց գրառումից առաջ: Այս ամենից բացի՝ ուսանող, գրառելով բանահյուսական նյութեր, իր ուժերի չափով մասնակցում է բանահյուսության պահպանման գործընթացին:

Հոդվածում ներկայացվում են բանահավաքչության ուսուցման և կիրառման պատմությունը ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում, 1970-1980-ական թթ. Բանահավաքչական պրակտիկայի ավանդույթը, ինչպես նաև՝ հեղինակի կողմից այդ ավանդույթը մասնակիորեն վերականգնելու փորձերը 2021 թվականից ֆակուլտետում գործող «Բանահավաքչական ակումբի» ու 2024-2025 թթ. ԵՊՀ ներքին դրամաշնորհով իրականացված «Արցախյան ավանդազրույցների գրառում, քարտեզագրում և շտեմարանավորում» բանահավաքչական ծրագրի շրջանակում:

Հոդվածում ներկայացվում են մեթոդական ցուցումներ դաշտային աշխատանքների գրագետ կազմակերպման համար՝ սկսած բանահավաքչության նախապատրաստական փուլից մինչև գրառված նյութերի արխիվացում: Անդրադարձ է կատարվում բանահավաքչության տեխնիկական միջոցներին ու դրանց կիրառման յուրահատկություններին, ներկայացվում են ծրագիր-հարցարանների կարևորությունն ու դրանք կազմելու սկզբունքները, նյութի գրառման ու փաստագրման առանձնահատկությունները, բանասացի հետ հարցազրույց վարելու նրբություններն ու էթիկական նորմերը, ձայնագրությունների վերծանության և մշակման ժամանակ բանասացի խոսքը ճշգրիտ պահպանելու սկզբունքները, նյութն արխիվացնելու ու շտեմարանավորելու ժամանակակից մեթոդներն ու այլ խնդիրներ, որոնք կարող են ուղղորդող լինել բանահավաքչություն կատարող բանասեր ուսանողներին:

***Բանալի բառեր՝** բանահյուսություն, բանահավաքչություն, մեթոդ, ուսուցում, հարցազրույց, ձայնագրություն, մտաքարտեզագրում:*

Հետազոտությունը կատարվել է 2024-2025 թթ. ԵՊՀ ներքին դրամաշնորհային ծրագրով՝ «Արցախյան ավանդազրույցների գրառում, քարտեզագրում և շտեմարանավորում» վերնագրով:

Հիմնախնդիրը: Բանահավաքչությունը բանագիտության կարևոր բաղադրիչներից է: Կարելի է ասել, որ բանագիտությունը սկսվում է հենց բանահավաքչությունից, քանի որ ժողովրդական բանահյուսությունը ուսումնասիրելու համար նախ պետք գտնել այն իր կենդանի գոյավիճակում և գրագիտորեն գրառելով՝ փաստագրել ու արխիվացնել այն: Բանագիտություն ուսումնասիրող ուսանողին բանահավաքչության հիմնական սկզբունքներին ու մեթոդաբանությանը տիրապետելը անհրաժեշտ է բանահյուսական դաշտն ավելի լավ ճանաչելու և իր ուժերի չափով բանահյուսական կենդանի նյութերի պահպանությանը մասնակցելու համար:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների հակիրճ վերլուծություն: Բանահավաքչության սկզբունքների մասին բազմիցս խոսվել է ընդհանուր բանագիտության մեջ, և այս խնդրին նվիրված ուսումնասիրություններ, մեթոդական աշխատանքներ լույս են տեսնում նաև մեր օրերում: Բանահավաքչության մասին դասական աշխատություններից է Բյուսու Ջեքսոնի «Դաշտային աշխատանք» գիրքը, որում հեղինակը, հիմնվելով սեփական փորձառության վրա, ներկայացնում է դաշտային աշխատանքը՝ որպես մի գործընթաց, որում մեծ դերակատարում ունի նաև գրառողը՝ իր ձևակերպած հարցադրումներով, էթիկական ճիշտ մոտեցմամբ [12]: Այսպիսի նորագույն աշխատանքներից ուշաբժան է հատկապես 2019 թ. Ինդիանայի համալսարանում լույս տեսած «Ձեռնարկ բանահյուսության և երաժշտական ֆոլկլորի գրառման» աշխատությունը, որի հեղինակներն են Լիզա Գիլմանն ու Ջոն Ֆենը [11]: Աշխատությունը հասցեագրված է հատկապես ուսանողությանը և սովորեցնում է՝ ինչպես ճիշտ գրառել բանահյուսական նյութերը, փաստագրել ու արխիվացնել դրանք:

Բանահավաքչության վերաբերյալ աշխատությունները բազմաթիվ են նաև ռուս բանագիտության մեջ: Ավելին, այստեղ բանահավաքչությունը շատ համալսարաններում ուսումնասիրում են որպես առանձին առարկա: Այսօր համացանցում կարելի է գտնել բազմաթիվ ծրագրեր ու ձեռնարկներ՝ նվիրված այս թեմային: Այսպիսի մեթոդական ձեռնարկներից մեկում հարուստ ցուցումներ են տրվում բանահյուսության գրառման մեթոդների, բանահավաքչության գործընթացի, ինչպես նաև գրառված նյութի մշակման ու դասակարգման շուրջ [8]: Նմանատիպ մեկ այլ ձեռնարկ համակողմանի ներկայացնում է բանահավաքչության մեթոդաբանությունը՝ սկսած բանահավաքչության նախնական փուլերից մինչև նյութի արխիվավորում [10]: Բուհական ծրագրերում, բանագիտության մասնագիտացման ծրագրերում բանահավաքչությունը որպես առանձին առարկա է հանդես գալիս (օրինակ՝ [9]): Այսպիսի բազմաթիվ օրինակներ կարելի է բերել:

Հայկական իրականության մեջ, ցավոք, բուհական ծրագրերում ներկայումս բացակայում է բանահավաքչությունը՝ որպես առանձին առարկա կամ որպես «Հայ ժողովրդի բանահյուսություն» առարկայի գործնական մաս, չկան ժամանակակից աշխատություններ՝ նվիրված բանահավաքչության մեթոդաբանությանը:

Նպատակը: Հոդվածի նպատակն է ներկայացնել բանահավաքչության ուսուցման ու գործնականում կիրառման հիմնական առանձնահատկություններն ու մեթոդները, ընդգծել դրանց կարևորությունը բանահյուսություն ուսումնասիրող ուսանողի համար: Այս նպատակով փորձելու ենք անդրադառնալ հարցի պատմությանը՝ կենտրոնանալով ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում հատկապես վերջին տարիներին իրագործված բանահավաքչական աշխատանքներին, մշակված և կիրառված ժամանակակից մեթոդներին ու սկզբունքներին, որոնք այսօր նաև ուսուցանվում են ֆակուլտետի առաջին կուրսի «Հայ ժողովրդի բանահյուսության» դասընթացի շրջանակներում:

Արդիականությունը: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է բանահավաքչության կարևորությամբ բանահյուսություն ուսումնասիրող հայ բանասերի՝ առարկայի յուրացման առումով: Աշխարհի տարբեր երկրների բուհերում կան դաշտային աշխատանքներին, բանահավաքչական գրառման ուսուցմանը նվիրված առանձին առարկաներ, որոնց շրջանակում ուսանողները սովորում և անձնապես կիրառում են բանահավաքչությունը՝ որպես բանահյուսության ուսումնասիրման կարևոր գործիք:

Բանահավաքչության ուսուցումն ու կիրառումը կարևոր են ոչ միայն ժողովրդական բանավոր ավանդույթի գրառման, արխիվավորման և պահպանման, այլև բանահյուսություն առարկան յուրացնելու առումով: Բանահավաքչությունը գործնականում ամրապնդում է ժողովրդական նյութի պահպանման, փոխանցման ու գրառման մասին տեսական գիտելիքները, որոնք ստանում է ուսանողը լսարանային դասախոսությունների ժամանակ, թույլ է տալիս հաղորդակցվել կենդանի ապրող բանահյուսությանը: Ճիշտ է, ներկայումս արդեն չկա բանասացության այն՝ հարուստ դաշտը, որ եղել է նախորդ դարերում. մեր օրերում բանասացությունը՝ որպես ժամանցի սիրված եղանակ, զիջել է իր դիրքերը, և նույնիսկ գյուղական միջավայրերում այսօր դժվար է գտնել ավանդական լայնածավալ ժանրեր (այս խնդիրների շուրջ տե՛ս [7]), սակայն կենդանի են կարճատև ժանրերը՝ առած-ասացվածքները, անեծք-օրհնանքները, հանելուկներն ու շուտասելուկները, պատմվում են ավանդազրույցներ, զվարճախոսություններ, իրապատում ու սնահավատական զրույցներ, երգվում են ժողովրդական երգեր, որոնք այսօր էլ կարոտ են գրառման, արխիվավորման ու պահպանման:

Նորույթը: Ուսումնասիրության նորույթը պայմանավորված է բանահավաքչության ավանդական ու նորագույն փորձի հաշվառմամբ բանահավաքչության նոր մոտեցումների առաջադրմամբ, որոնք հեղինակի կողմից կիրառության մեջ են դրվել վերջին տարիներին Հայ բանասիրության ֆակուլտետում գործող «Բանահավաքչական ակումբի» ու արցախյան ավանդազրույցների գրառմանը նվիրված ԵՊՀ

ներքին դրամաշնորհային ծրագրի շրջանակում:

Հիմնական նյութի շարադրանքը: ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում 1970-1980-ական թթ. բանահավաքությունը «Հայ ժողովրդի բանահյուսություն» առարկայի մաս է կազմել: Ֆակուլտետի առաջին կուրսեցիները ամռանը մեկնել են բանահավաքչական պրակտիկայի և ղեկավարների ուղեկցությամբ շրջել են գյուղերում, գրառել բանահյուսական ժանրեր: Բանահյուսական պրակտիկան ղեկավարել են ամբիոնի տարբեր դասախոսներ, սակայն նյութի արխիվավորմամբ զբաղվել է ֆակուլտետում բանահյուսության երկարամյա դասախոս Նելլի Հակոբյանը: Բանասիրականի ուսանողների գրառման հիմքով է լույս տեսել «Հայկական ժողովրդական հեքիաթներ» պատկառելի ժողովածուն, որը կազմել են Նելլի Հակոբյանն ու Արծրուն Սահակյանը [3]: 1990-ական թվականներից բանահավաքչական պրակտիկաները ցավալիորեն դուրս են եկել ծրագրերից, և «Հայ ժողովրդի բանահյուսություն» առարկան Հայ բանասիրության ֆակուլտետում շարունակել է դասավանդվել իր տեսական մասով միայն առաջին կուրսի առաջին կիսամյակում, իսկ բանահավաքչությունը մնացել է որպես հանձնարարվող ոչ պարտադիր ինքնուրույն աշխատանք:

2006 թվականից Հայ բանասիրության ֆակուլտետում դասավանդելով «Հայ ժողովրդի բանահյուսություն» առարկան՝ յուրաքանչյուր տարի ուսանողներին որպես կամավոր ինքնուրույն աշխատանք հանձնարարել եմ գրառել իրենց տեղավայրերի բանահյուսական նմուշները: Ուսանողների մեծ մասը հաճույքով ու սիրով է կատարել այս հանձնարարությունը: Հատկապես հարուստ նյութեր էին գրառում մարզերից, գյուղերից եկած ուսանողները: Բանահավաքչությունը ճիշտ իրականացնելու համար մանրամասն բացատրում էի հարցազրույցների անցկացման նրբությունները, մեթոդաբանությունը, ինչպես նաև՝ նյութը գրառելու հիմնական սկզբունքներն ու կանոնները, թեև այս ամենն այն ժամանակ առարկայի ծրագրի մաս չէր կազմում: Բանահավաքչական աշխատանքները հետաքրքրում էին ուսանողներին, և այս հետաքրքրությունից ավելի ուշ ծնվեց «Բանահավաքչական ակումբի» գաղափարը, որի շրջանակում 2021-2022 թթ. իրականացվեցին բանահավաքչական խմբարշավներ Արմավիրի ու Կոտայքի մարզերում:

Ուսանողական բանահավաքչական աշխատանքները նոր և առավել համակարգված ընթացք ստացան 2023 թ.՝ արցախյան բռնագաղթից հետո, երբ Հայ բանասիրության ֆակուլտետում իրենց ուսումը շարունակելու տեղափոխվեցին Արցախի պետական համալսարանի մի քանի տասնյակ ուսանողներ: ԵՊՀ ներքին դրամաշնորհով ստացված նյութական աջակցությունը թույլ տվեց լայնածավալ բանահավաքչական գործունեություն նախաձեռնել: «**Արցախյան ավանդազրույցների գրառում, քարտեզագրում և շտեմարանավորում**» ծրագրի շրջանակում սկսեցինք բանահավաքչական միջգիտակարգային մի ծրագիր, որի նպատակն էր գրառել և փաստագրել արցախահայության բանավոր ավանդույթի կենդանի նմուշներ՝ կենտրոնանալով հատկապես ավանդազրույցի ժանրի վրա: Ավանդազրույցների գրառումը արժեքավոր է ոչ միայն ոչ նյութական մշակութային ժառանգության

պահպանության, լեզվաբարբառային տարատեսակ դրսևորումների ամրագրման տեսանկյունից, այլև սա այն ժանրն է, որ հսկայական տեղեկություն է ամփոփում ժողովրդի կյանքի, պատմամշակութային հուշարձանների, բնաշխարհի և այնտեղ ապրող հայ մարդու, տոհմական պատմությունների վերաբերյալ: Ծրագրի բուն նպատակն էր պահպանել հայկական Արցախի մասին ժողովրդական պատմությունները՝ տոհմական ավանդագրույցները, աշխարհագրական, կենդանական, բուսական աշխարհի վերաբերյալ ժողովրդական ավանդական պատկերավոր հյուսվածքները: Նախատեսվում էր գրառել, ուսումնասիրել, դասակարգել ու շտեմարանավորել արցախահայոց ավանդագրույցները: Ծրագրի կարևոր բաղադրիչ էր նյութերի քարտեզագրումը, որում կարտացոլվեին նյութերի ստեղծման տեղավայրերը Արցախի քարտեզում և դրանց տեղաշարժը՝ մինչև նոր բնակության վայր:

Ծրագրին ակտիվ մասնակցություն ունեցան Հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողները: Բանահավաքչություն անցկացվեց ինչպես ֆակուլտետի ներսում, այնպես էլ տարբեր շրջաններում, կազմակերպվեցին բանահավաքչական խմբարշավներ Կոտայքի, Արագածոտնի, Արարատի մարզերում: Գրառված ավանդագրույցները վերծանվեցին և շտեմարանավորվեցին: Ստեղծվեց արցախյան ավանդագրույցների քարտեզագրված շտեմարանի կայք: Աշխատանքի արդյունքը ոչ միայն գրառված նյութերն էին, այլև ֆակուլտետում բանահավաքչական աշխատանքների ավանդույթի ժամանակավոր վերակենդանացումը, որի հիմքով ծրագրին կամավորագրված մի մեծ խումբ ուսանողներ սովորեցին կատարել բանահավաքչություն: Կատարված աշխատանքների ընթացքում մշակվեցին բանահավաքչության սկզբունքներ, ստեղծվեցին հարցաշարեր, կիրառվեցին բանահավաքչության ու նյութի արխիվացման նոր մեթոդներ, որոնք հիմք հանդիսացան Հայ բանասիրության ֆակուլտետի առաջին կուրսի «Հայ ժողովրդի բանահյուսություն» առարկայի 2025 թ. ծրագրի վերամշակված տարբերակում բանահավաքչական հմտություններին նվիրված առանձին դասաժամերի ավելացմանը:

Ստորև կներկայացնենք բանահավաքչական աշխատանքի հիմնական փուլերն ու մեթոդաբանությունը, որոնք կարող են ուղղորդող դեր կատարել բանահավաքչական աշխատանք կատարող ուսանողների համար:

Բանահավաքչության հմտություններ: Ի՞նչ պետք է իմանալ բանահավաքչության մասին, ինչպե՞ս սկսել ու ավարտել այն գրագետ, ամրագրել ժողովրդական նյութն ամբողջական, առանց կորուստների: Ինչպե՞ս ցանկացած աշխատանք, բանահավաքչությունը ևս կազմված է տարբեր փուլերից, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է որոշակի և հստակ աշխատանք:

Նախապատրաստական փուլ: Յուրաքանչյուր բանահավաքչության առաջին փուլը նախապատրաստականն է, որի ժամանակ բանահավաքչական աշխատանքների պատրաստվողը պետք է իրականացնի ներքոհիշյալ գործողությունները:

Ա. *Տեղական բանահյուսության ուսումնասիրություն:* Բանահավաքը պետք է ուսումնասիրի նախկինում այդ տեղանքում գրառված բանահյուսական նյութը,

ծանոթանա տեղական յուրահատկություններին, ճշգրտի տեղանքի բանահյուսությանը բնորոշ ժանրային կազմը: Սա հնարավորություն է տալիս կազմելու առավել նպատակային հարցարաններ, և հետագայում էլ հետևելու, թե ինչ զարգացում են ապրել տվյալ տարածքի բանահյուսական ժանրերը, որքանով են պահպանվել և ինչ նոր դրսևորումներ են ունեցել:

Բ. *Տվյալների հավաքագրում, կապերի հաստատում*: Բանահավաքչության նախնական փուլում բանահավաքը պետք է փորձի կապ հաստատել տվյալ տարածքի մշակութային հիմնարկների, գյուղապետարանների կամ քաղաքապետարանների աշխատակիցների հետ, որոնք կարող են օգնել բանասացներ գտնելու հարցում, տրամադրել տեղաբնակչության մասին անհրաժեշտ տվյալներ, հուշել տաղանդավոր, խոսքաշեն բանասացների անուններ (եթե այդպիսիք կան):

Գ. *Նյութատեխնիկական միջոցների նախապատրաստում*: Տեխնիկական միջոցները մեր օրերում բազմազան են. ներկայումս բանահավաքն ունի շատ ավելի մեծ հնարավորություններ՝ նյութը գրառելու համար. հասանելի են փոքրիկ ձայնագրիչներ, լուսանկարող ու տեսանկարահանող սարքեր, որոնք թույլ են տալիս նյութն ամրագրել ոչ միայն ձայնային տարբերակով, այլև տեսագրություններով: Բանասացությունը կենդանի գործընթաց է, երբեմն շատ կարևոր է ամրագրել նաև բանասացի մարմնի շարժումները, դիմախաղը, ձայնի հնչերանգը, որը հնարավոր է դառնում տեսագրության ժամանակ: Բացի դրանից՝ կան բանահյուսական դրսևորումներ, որոնք կատարվում են որոշակի գործողություններին զուգահեռ, ինչպիսիք են պարերգերը, խաղերգերը, խաղ-հաշվելուկները, ծիսական ու ծիսահմայական խոսքերը, հմայական աղոթքները և այլն: Այս դեպքում նյութի տեսագրությունը դառնում է պարտադիր: Նախապատրաստական փուլում անհրաժեշտ է տիրապետել տեխնիկայի օգտագործման յուրահատկություններին:

Անհրաժեշտ է նախապատրաստել նաև տետրեր՝ ընթացիկ նշումների, ձևաթղթեր՝ նյութերի փաստաթղթավորման համար: Սրանց անդրադարձ կկատարենք հետագա շարադրանքում:

Դ. *Հարցարանների կազմում*: Բանահավաքչության հիմնական մեթոդը հարցազրույցի անցկացումն է, որը ցանկալի է իրականացնել նախապես կազմված հարցարաններով: Հայ իրականության մեջ ծրագիր-հարցարանների կիրառումը դեռևս առնչվում է բանահավաքչության նախնական փուլերին: Գ. Սրվանձտյանցի «Գրոց-բրոցից» հետո և դրա հիմքով 1987 թ. Գ. Խալաթյանցը կազմում է իր հայտնի ծրագիր-հարցարանը՝ «Ծրագիր հայ ազգագրութեան եւ ազգային իրավաբանական սովորութիւնների», որում ազգագրական ու բանահյուսական նյութերի գրառման բազում մանրամասն հարցեր էին շարադրված [4]: Ծրագիրը նպատակ ուներ գիտական կայուն հիմքերի վրա դնելու Սրվանձտյանցից հետո սկիզբ առած բանահավաքչության տարերային գործընթացը [2, 84]: Ավանդաբար, սկսած առաջին բանահավաքներից, ազգագրությունն ու բանահյուսությունը գրառվել են համատեղ [5, 58-85]: Այդպիսին են Գ. Սրվանձտյանցի ժողովածուները, այդպիսին են «Ազգագրական հանդեսի», «Էմինյան ազգագրական ժողովածուի» հատորները, որոնցում բա-

նահյուսությունն ու ազգագրությունը լույս էին տեսնում կողք կողքի: Խալաթյանցի՝ երկու մասից բաղկացած ծրագրում բանահյուսական նյութերի հարցարանը տրված էր առաջին մասի վերջին՝ տասներորդ ենթաբաժնում՝ «Ժողովրդական բանատր գրականության տեսակները» խորագրով [4, էջ 77-84]: Հարցերից յուրաքանչյուրը վերաբերում էր բանահյուսական մի ժանրի, և բանասացին օգնելու ու կողմնորոշելու նպատակով բերվում էին տվյալ ժանրի հայտնի տարբերակների անվանումներ: Խալաթյանցի այս ծրագիր-հարցարանը երկար ժամանակ ուղենիշ է եղել հայ բանահավաքների համար:

Մեր օրերում հարցարանը պետք է համապատասխանեցնել գոյությունը պահպանած ժանրերին: Հարցարանի սկզբունքը, իհարկե, բանահյուսության դեպքում նույնն է. հարցերը անհրաժեշտ է տալ ըստ բանահյուսական ժանրերի: Այլ է հարցը ծիսական բանահյուսության, հատկապես ծիսերգերի դեպքում: Մենսի մաս կազմելով՝ բանահյուսական այսպիսի նմուշներն ավելի հասկանալի ու հետազայում նաև ուսումնասիրության համար առավել գիտական են դառնում ծեսի մեջ գրառելու դեպքում: Այս պարագայում բանահյուսությունն ու ազգագրությունը գրառվում են միահյուսված: Օրինակ, եթե գրառում ենք հարսանեկան երգեր, դրանք ցանկալի է գրառել ծիսական նկարագրերում՝ հասկանալու համար, թե ծեսի որ դրվագում, ինչ հանգամանքներում են դրանք կատարվել: Նույնը կարելի է ասել նաև մանկական խաղային բանահյուսության գրառման մասին. մանկական հաշվելուկները, խաղերի ընթացքում երգվող երգերը անհրաժեշտ է գրառել խաղերի նկարագրերում:

Հարցարանի կազմումը յուրաքանչյուր բանահավաքչական արշավի առաջին փուլն է: Կախված նրանից, թե բանահավաքչությունն ինչ նպատակ է հետապնդում, կարող են կազմվել տարբեր հարցարաններ: Եթե բանահավաքներն ուսումնասիրում են դաշտն ընդհանրապես՝ իր տարատեսակ դրսևորումներով, հարցարանը կներառի բանահյուսական բոլոր կենդանի ժանրերի վերաբերյալ հարցադրումներ: Սակայն լինում են նաև նպատակային գիտարշավներ՝ ուղղված մի որևէ կոնկրետ ժանրի գրառմանը: Այս դեպքում հարցարանը կներառի տվյալ ժանրին բնորոշ ամենատարբեր հարցադրումներ՝ հուշող հարցերով:

Հարցադրույցներ: Բանահավաքչության գլխավոր փուլը հարցադրույցների անցկացումն է, որն ունի իր նրբությունները: Այստեղ շատ կարևոր են բանահավաքի շփման հմտություններն ու հարցերով բանասացին ճիշտ ուղղորդելու կարողությունը:

Բանահավաքը զրույցի է բռնվում անծանոթ մարդկանց հետ, և նրա առաջին խնդիրն է շահել բանասացի համակրանքը, ձեռք բերել վստահությունը՝ զրույցն անկաշկանդ շարունակելու համար, իսկ դա կարող է տեղի ունենալ միայն անմիջական, սրտաբաց մոտեցման ժամանակ: Բանահավաքը պետք է անկեղծ հետաքրքրություն ցույց տա տեղական մշակույթի հանդեպ, ազնվորեն բացատրի նյութերի գրառման նպատակն ու դրանց հետագա օգտագործման կարևորությունը, միննույն ժամանակ բանասացին պետք է ժամանակ տա իրեն հետաքրքրող թեմաներից խոսելու: Բացառված չէ, որ նախքան բուն նյութին անցնելը բանասացն

ուգում է պատմել իր կյանքի, իր զավակների կամ իր հոգսերի մասին: Բանահավաքը սիրով պետք է ունկնդրի և անկեղծ հետաքրքրվածություն ցույց տա. դա ստեղծում է մտերմիկ միջավայր և հող է նախապատրաստում երկար գրույցի բանահյուսության մասին: Բանահավաքը պետք է հնարավորինս հասարակ լինի, իր խոսքով ու պահվածքով ցույց տա, որ եկել է «սովորելու» տեղացիների հետաքրքիր մշակույթը: Ցանկալի է, որ Բանահավաքը չխոսի խիստ գրական լեզվով: Բանասացի խոսքը բարբառով լսելու համար ցանկալի նույնիսկ կլինի, որ հնարավորության դեպքում նրա զրուցակիցը ևս լինի բարբառախոս:

Երբ արդեն բանասացը տեղյակ է բանահավաքի այցի նպատակից և պատրաստ է պատմել բանահյուսական իր գիտելիքները, ձայնագրիչը միացնելուց կամ լուսանկարելուց, տեսանկարահանելուց առաջ բանահավաքն անպայման պետք է զգուշացնի բանասացին, ստանա նրա համաձայնությունը:

Բանասացի խոսելու ընթացքում չպետք է նրան խանգարել, եթե անհասկանալի բառ է ասում: Հարկավոր է նշում կատարել և խոսքն ավարտելուն պես ճշտել հարցը:

Բանահյուսական նյութեր գրառելիս պետք չէ անտեսել նաև այն պատումները, որոնք գրքային ծագում ունեն: Ինչպես իրավացիորեն նկատում են ռուս ուսումնասիրողները, երբեմն տաղանդավոր կատարողները այդ բնագրերը խիստ յուրօրինակ են դարձնում [9, 17]:

Եվս մեկ հանգամանք, որ հատուկ է ներկայիս բանահավաքչությանը: Եթե բանավոր պատմվող նյութն այսօր առատ չէ, ապա հատկապես գյուղական միջավայրերում շատ կարելի է գտնել ձեռագիր հուշատետրեր, որոնցում գյուղացիները գրի են առել գյուղական զանազան իրադարձություններ և բանահյուսական առատ նյութեր: Այսպիսի հուշատետրերը ևս արժանի են ուսումնասիրության: Եթե անգամ մարդիկ չեն ուգում հանձնել իրենց տետրերը ուսումնասիրողին, ապա կարելի է թույլտվություն ստանալով լուսանկարել դրանց բանահյուսական հատվածները և դրանք ևս արխիվացնել հետագա ուսումնասիրման համար:

Բանահավաքչության ուշագրավ յուրահատկություններից մեկն այն է, որ որքան երկարում է գրույցը, այնքան ավելի շատ բան է հիշում և պատմում բանասացը: Կան նույնիսկ դեպքեր, երբ նույն բանասացի մոտ երկրորդ, երրորդ այցերն ավելի արդյունավետ են լինում: Այնպես որ, ցանկալի է կրկնել այցերը, եթե բախտ է վիճակվել հանդիպելու լավ բանասացի:

Մտաքարտեզագրում: Բանահավաքչության նոր մեթոդներից է մտաքարտեզագրումը, որն այսօր ժամանակակից աշխարհում հիմնականում կիրառվում է ազգագրական նյութերի հավաքագրման նպատակով, սակայն շատ լավ գործիք է նաև բանահավաքչության, հատկապես ավանդազրույցների ժանրի գրառման ժամանակ: Մեթոդի հիմնականն սկզբունքն այն է, որ մարդը մտովի վերականգնում և ուրվագծում է իր անհատական վերապրած գյուղը կամ քաղաքը՝ համապատասխան վայրերի հետ կապված բանավոր պատմություններով: Որպես ազգագրական մեթոդ՝ այն կիրառվել էր դեռ 2020 թ. պատերազմից և Շուշիի կորստից հետո շուշե-

ցիների պատմությունների հիմքով ստեղծված «Շուշի. մտաքարտեզներ» գրքի ազգագրական նյութերի հավաքման ժամանակ և հենց այստեղ է առաջին անգամ կիրառվել իր հայերեն շատ հաջող ընտրված եզրույթով [5, 19]:

Մտաքարտեզագրման մեթոդը բավական արդյունավետ կիրառեցինք արցախյան ավանդազրույցների գրառմանը նվիրված ծրագրի շրջանակում¹: Հարցազրույցին զուգահեռ բանասացին առաջարկում էինք մոտավոր գծել այն վայրերը, որոնց վերաբերյալ ավանդազրույցներ գիտեր՝ վանքերն ու սրբատեղիները, լեռներն ու աղբյուրները և այլն: Այսպես բանասացը վերապրում էր տարածքի հիշողությունը, գրում կարևոր վայրերի անվանումները՝ զուգահեռ պատմելով դրանց մասին ժողովրդական պատմությունները:

Նյութի նախնական մշակում. փաստաթղթավորման աղյուսակ: Բանահավաքչության ընթացքում անհրաժեշտ է լրացնել բանահավաքչության փաստաթղթավորման աղյուսակը՝ արագ նշումներ կատարելով: Այսպիսի աղյուսակները օգնում են նյութի հիմնական մշակման՝ ձայնագրություններից վերծանելու ու դասակարգելու ժամանակ, այս աղյուսակների շնորհիվ բանահավաքն ունենում է ձայնագրված նյութերի հիմնական տվյալները՝ ձայնագրություններում առավել հեշտ կողմնորոշվելու համար:

Բանասացի անուն, ազգանուն հայրանուն	
Բանասացի ծննդյան թիվը	
Բանասացի ծննդյան ու բնակության վայրը, եթե տեղափոխվել է, տեղափոխման թիվը	
Բանասացի մասնագիտությունը	
Ումի՞ց է լսել նյութերը, ի՞նչ հանգամանքներում	
Բանահավաքչության վայրը	
Բանահավաքչության ամսաթիվը	
Բանահավաք (խմբաբաժնի դեպքում՝ անդամները)	
Նշել պատմված նյութի վերնագիրը կամ ժանրը	

Գրառված նյութերի վերծանություն և շտեմարանավորում: Նյութերի ձայնագրության հաջորդ փուլը ձայնագրություններից դրանց վերծանումն է, տեքստի վերածումը: Այստեղ ևս բանահավաքին որոշակի հմտություններ են անհրաժեշտ՝ անկորուստ և ամբողջական նյութը թղթին հանձնելու համար: Այս առումով անհրաժեշտ է հաշվի առնել մի քանի կարևոր հանգամանք.

1. բանահյուսական նյութը վերծանելիս բանահավաքը պետք է այն պահպանի նույնությամբ, չավելացնի և չպակասեցնի ոչինչ, չխմբագրի նյութը,
2. բանահավաքը պետք է հաշվի առնի, որ բանահյուսական գրառումները ծառայում են նաև բարբառների ուսումնասիրության համար, հետևապես պետք է

¹ Մեթոդի կիրառությանը ծանոթացնելու համար շնորհակալ եմ «Արցախյան ավանդազրույցների գրառում, քարտեզագրում և շտեմարանավորում» ծրագրի անդամ, ազգագրագետ Գայանե Շագոյանին, որի խորհրդով նյութերը գրառեցինք հիմնականում մտաքարտեզագրման մեթոդով, նաև «Շուշի. մտաքարտեզներ» գրքի համահեղինակ, ազգագրագետ Գոհար Ստեփանյանին:

պահպանել բարբառի հնչարտաբերական յուրահատկությունները՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելով համապատասխան տարբերանշաններ,

3. վերծանության ժամանակ անհրաժեշտ է գրառել բանասացի բոլոր բացականչությունները, տեքստի վերաբերյալ տրված մեկնաբանություններն ու բացատրությունները,

4. ցանկալի է բանասացից գրառված նյութերը անմիջապես ենթարկել ժանրային դասակարգման և խմբավորման՝ հետագա աշխատանքը հեշտացնելու նպատակով,

5. եթե ձայնագրություններում կան երգեր, ապա դրանք պետք է նոտագրվեն առանձին մասնագետների կողմից:

Գրառված նյութի արխիվացումը. էլեկտրոնային շտեմարաններ: Եթե նախկինում բանահավաքչության ընթացքում ձեռք բերված նյութերը պահպանվում էին թղթային տարբերակներով՝ ձեռագիր տետրերի կամ տպագիր թղթապանակների համարակալումներով, ապա մեր օրերում դրանք արդեն հնարավորություն կա պահպանելու թվային կրիչների վրա: Նյութերի հետագա օգտագործումն առավել արդյունավետ դարձնելու համար պետք է տեսակավորել դրանք առանձին էլեկտրոնային թղթապանակներում՝ ըստ տարածաշրջանի ու ըստ բանասացի անվան: Ընդ որում՝ նույն թղթապանակի մեջ հարկավոր է հավաքել նույն բանասացի բոլոր նյութերը՝ ձայնագրությունները, լուսանկարներն ու տեսագրությունները, վերծանված բնագրերն ու փաստաթղթային տվյալները: Այսպես դասակարգված նյութերը ամբողջական տեղեկություններ կամփոփեն յուրաքանչյուր բանասացի ու նրա պատմած բանահյուսական նյութերի մասին:

Ժամանակակից տեխնոլոգիաները թույլ են տալիս նյութերը շտեմարանավորել նաև ցանցային տարածքում՝ դրանք հասանելի դարձնելով այլոց ևս: Նման շտեմարանի շատ լավ օրինակ է վերը հիշված՝ «Արցախյան ավանդազրույցների գրառում, քարտեզագրում և շտեմարանավորում» ծրագրի շրջանակում ստեղծված կայք-քարտեզը², որում տեղ են գտել գրառված նյութերը՝ իրենց գիտական տվյալներով՝ ծանոթագրություններով ու բարբառային բառարաններով: Կայքում ներկայացված նյութերը գրառված են Երևանում ու Հայաստանի տարբեր մարզերում բնակություն հաստատած արցախահայերից: 60 բանասացների հետ անցկացված հարցազրույցները ներկայացնում են Արցախի հինգ շրջաններից՝ Մարտակերտից, Մարտունուց, Ասկերանից, Շուշիից, Հադրութից գրառված ավանդազրույցները ակտիվ քարտեզի վրա [10]: Ավանդազրույցներն անմիջականորեն կապված են տվյալ երկրի աշխարհագրական տեղավայրերին ու մարդկանց բնակատեղիներին, հետևապես այս ժանրի դեպքում շատ ավելի նպատակահարմար է ներկայացնել

² Կայքի պատրաստումն իրականություն դարձավ ծրագրի անդամ, աշխարհագրագետ Լուսինե Հակոբյանի ու ծրագրին կամավորությամբ միացած, «Գազպրոմ Արմենիա» ուսումնասպորտային համալիրի ինֆորմատիկայի ուսուցչուհի Մարիամ Պետրոսյանի, աշակերտներ Դավիթ Տուրյանի ու Էրիկա Հակոբյանի շնորհիվ, որոնց հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

նյութերը նաև քարտեզի տեսքով:

Եզրակացություններ

Այսպիսով՝ դիտարկված խնդիրները թույլ են տալիս հանգելու հետևյալ եզրակացության.

1. Բանահավաքչությանը տիրապետելը բանահյուսություն առարկան ուսումնասիրող ուսանողի կարևոր հմտություն է, որն անհրաժեշտ է ձևավորել ոչ միայն տեսական իմացություն հաղորդելով, այլև գործնականում այդ հմտության կիրառությամբ:

2. Եթե ոչ կազմակերպված խմբակային պրակտիկայի միջոցով, ապա գոնե անհատական աշխատանքի հանձնարարությամբ անհրաժեշտ է բանահյուսություն ուսումնասիրող ուսանողին հանձնարարել գտնել ու գրառել կենդանի պատմվող բանահյուսություն, որի նպատակն է ոչ միայն ձեռք բերված գիտելիքների գործնական կիրառությունը, այլև բանահյուսության գրառման ու պահպանման գործընթացին մասնակից դառնալը:

3. Բանահավաքչությունը արդյունավետ է ընթանում, եթե բանահավաքը նախապես տիրապետում է բոլոր նրբություններին ու մեթոդներին, ծանոթ է լինում տվյալ աշխարհագրական տարածքում նախքան այդ գրառված նյութերին, ունի նպատակային մշակված հարցաշար, գիտի հարցազրույց վարելու նրբությունները, ունի նյութը գրագետ արխիվացնելու հմտություններ և այլն: Այս ամենը հարկավոր է ուսանողին սովորեցնել նախքան դաշտ մեկնելը:

3. Բանահավաքչությունը ներկայումս օգտվում է ինչպես ավանդական, այնպես էլ նոր մեթոդներից, որոնք մասամբ պայմանավորված են ժամանակակից տեխնոլոգիաներով և նպաստում են նյութի գրառման ու պահպանման առավել արդյունավետ իրագործմանը:

FOLKLORE FIELDWORK AT THE FACULTY OF ARMENIAN PHILOLOGY, YSU: METHODOLOGICAL GUIDELINES

Vardanyan Nvard

PhD in Philology, Associate Professor,

Yerevan State University,

Institute of Archaeology and Ethnography, NAS of the RA,

Republic of Armenia,

vardanyan.nvard@ysu.am

Summary

The article examines traditional and modern methods of folklore documentation and their teaching and application at the Faculty of Armenian Philology of Yerevan State University. The latter is presented through conclusions drawn from personal experience.

Unlike other branches of literature, the subject of folklore is not limited to the acquisition of book-based material alone, but also requires familiarity with living folklore in everyday practice and knowledge of the principles of its documentation. For a student studying this subject, it is important to be in the field, to listen, to observe, and to be able to record folklore materials. Through this process, the student more clearly understands the path taken by folklore texts—from the moment of their recording to their publication. In addition, by documenting folklore materials, the student contributes, to the extent possible, to the preservation of folklore.

By studying the experience of different countries, the article presents modern methods of folklore documentation and archiving. It addresses contemporary technical tools used in fieldwork and their application, highlights the subtleties and ethical norms of conducting interviews with narrators, emphasizes the importance of questionnaires and the principles of their design, and discusses the specifics of documenting and recording materials. It also touches upon the principles of accurately preserving the narrator's speech during transcription and processing of audio recordings, as well as modern means of archiving and creating repositories.

The article emphasizes the necessity of teaching folklore fieldwork to philology students. It recommends that greater attention be devoted to the teaching and practical application of fieldwork at the Faculty of Armenian Philology. The author presents practical experiences already implemented within the course *Folklore of the Armenian People* for first-year students and through the "Folklore Fieldwork Club," established at the faculty in 2021. It also includes the fieldwork program *Recording, Mapping, and Archiving Artsakh Legends*, carried out in 2024–2025 with YSU's internal grant. Methodological guidelines for folklore collection are presented; they can be taught to students studying folklore and applied in practice.

Keywords: *folklore, fieldwork, method, teaching, interview, audio recording, mind mapping.*

The research was carried out in 2024–2025 within the framework of YSU's internal grant program titled "*Recording, Mapping, and Archiving of Artsakh Legends.*"

ПОЛЕВАЯ ФОЛЬКЛОРИСТИКА НА ФИЛОЛОГИЧЕСКОМ ФАКУЛЬТЕТЕ ЕГУ: МЕТОДИЧЕСКИЕ УКАЗАНИЯ

Варданян Нвард

*Кандидат филологических наук, доцент
Ереванский государственный университет
Институт археологии и этнографии НАН РА
Республика Армения
vardanyan.nvard@ysu.am*

Аннотация

В статье рассматриваются традиционные и современные методы фиксации фольклора, а также их преподавание и применение на филологическом факультете Ереванского государственного университета. Данные вопросы освещаются через выводы, сделанные на основе личного опыта автора.

В отличие от других областей литературы, изучение фольклора не ограничивается лишь освоением книжного материала, но также требует знакомства с живым, бытовым фольклором и знания принципов его записи. Для студента, изучающего этот предмет, важно находиться в полевых условиях, слушать, наблюдать и уметь фиксировать фольклорные материалы. Такой подход позволяет студенту лучше понять путь, пройденный фольклорными текстами, начиная с момента их записи и до публикации. Кроме того, фиксируя фольклорные материалы, студент участвует в процессе сохранения фольклора в меру своих возможностей.

На основе изучения опыта различных стран в статье представлены современные методы записи и архивирования фольклора. Рассматриваются современные технические средства полевой работы и особенности их применения, тонкости и этические нормы проведения интервью с рассказчиками, значение и принципы составления программ и опросников, особенности фиксации и документирования материалов, принципы точного сохранения речи рассказчика при расшифровке и обработке аудиозаписей, современные способы архивирования и создания баз данных.

В статье подчеркивается необходимость преподавания полевой фольклористики для студентов-филологов. Предлагается уделять больше внимания обучению и практическому применению методов полевой работы на факультете армянской филологии. Представлены практические примеры, уже применяемые автором в рамках курса «Фольклор армянского

народа» для студентов первого курса и в рамках «Фольклористического клуба», действующего на факультете с 2021 г. Также описывается полевой проект «Запись, картографирование и архивирование арцахских преданий», реализованный в 2024-2025 гг. при поддержке внутреннего гранта ЕГУ. Представлены методические указания по сбору фольклорного материала, которые можно использовать в процессе преподавания дисциплины студентам, изучающим фольклористику, и применять на практике.

Ключевые слова: фольклор, фольклористическая полевая работа, метод, преподавание, интервью, аудиозапись, майндмэппинг.

Исследование было проведено в 2024–2025 гг. в рамках внутренней грантовой программы ЕГУ под названием «Запись, картографирование и архивирование арцахских преданий».

Օգտագործված գրականության ցանկ

1. Arts'akhyan avandazruys'tneri k'artezagravats shtemaran (2024-2025). <https://artsakh-25.github.io/contact.html> (in Armenian)
2. Harut'yunyan S., Banagitakan aknarkner, Yerevan, Gitut'yun, 2010. (in Armenian)
3. Haykakan zhoghovrdakan hek'iat'ner (kazm., N.A.Hakobyan, A.S.Sahakyan, khmb., M.Ye.Asatryan), Yerevan, YePH hrat., 1980. (in Armenian)
4. Khalat'eants' Gr., Tsragir hay azgarut'ean yev azgayin iravabanakan sovorut'iwnneri, Moskua, Dzularan yev tparan O.O. Herbek, 1887. (in Armenian)
5. Nahapetyan R.R., Hay azgagrut'yan patmut'yun (18-rd d. Yerkrord kesits' minch'ev mer orery), usumnakan dzernark, Yerevan, YePH hrat., 2023. (in Armenian)
6. Shushi. mtak'artezner (khmbagir` Tigran Amiryan), Yerevan, CSN LAB, 2021. (in Armenian)
7. Vardanyan N.KH., Hay banagitut'yan avandakan motets'umner yev ardi martahraverner: hamats'ants'ayin banahyusut'yan usumnasirman anhrazheshtut'yan shurj. Hay banasirut'yan herrankarner, Los-Anjeles-Yerevan, AMN Arevmtyan t'em, 2025, 172-186. (in Armenian)
8. Merkur'yeva Ye.S., Denisova Ye.I., Sovremennyye metody ekspeditsionnoy raboty. Obrabotka, sistematizatsiya i ispol'zovaniye fol'klorno-etnograficheskogo materiala v rabote s samodeyatelnym fol'klornym kollektivom. Metodicheskiye rekomendatsii, Samara, GBUK «Agentstvo sotsiokul'turnykh tekhnologiy», 2019. (in Russian)
9. Vaskul A.I., Komelina N.G., Polevaya fol'kloristika. Rabochaya programma uchebnoy distsipliny, Sankt-Peterburg, 2023, <https://pushkinskiydom.ru/wp-content/uploads/2024/03/Polevaya-folkloristika.pdf> (in Russian)
10. Ursegova N.A., Metodika organizatsii fol'klornoy, ekspeditsii Uchebno-metodicheskoye posobiye dlya studentov ssuzov kul'tury i iskusstv, Novosibirsk: Novosibirskiy oblastnoy kolledzh kul'tury i iskusstv, 2014. (in Russian)
11. Gilman L., Fenn J., Handbook for Folklore and Ethnomusicology Fieldwork, Indiana University Press, 2019.
12. Jackson Bruce, Fielwork, University of Illinois Press, Urbana and Chicago, 1987.

Получено: 23.09.2025

Рассмотрено: 09.10.2025

Принято: 23.10.2025

Received: 23.09.2025

Reviewed: 09.10.2025

Accepted: 23.10.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License